ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№Է/40/88-23 առ "16" 01 2023թ.

[թիվ 02/10 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին]

«Ամարաս-Յուս» ՍՊԸ տնօրեն
պարոն Յու. Ադյանին

Հարգելի պարոն Ադյան,

Տեղեկացնում ենք, որ **«ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20»** ծածկագրով ընթացակարգի շրջանակներում **«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի պահուստային թողարկման ДКВР 20/13 տեսակի 3 հատ շոգեկաթսաների ապատեղակայման և 2 հատ նոր շոգեկաթսաների տեղակայման աշխատանքների** կատարման նպատակով 19.08.2020թ. «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Ամարաս-Յուս» ՍՊԸ-ի միջև կնքվել է №02/10 պայմանագիրը, որի համաձայն կատարման ժամկետ է սահմանվել մուտքի թույլտվություն ստանալու օրվանից մինչև 30.12.2020թ., սակայն Ձեր կողմից մինչ օրս պայմանագրով նախատեսված աշխատանքները լիարժեք կատարված չեն:

Կարևոր ենք համարում նաև այն, որ աշխատանքները ավարտին հասցնելու հրատապությունից ելնելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ում կազմակերպվել են խորհրդակցություններ, որոնց մասնակցել է նաև Ձեր կազմակերպության ներկայացուցիչը, ինչպես նաև բազմիցս գրություններ են ուղարկվել Ձեզ այն մասին, որ սահմանված ժամկետում աշխատանքը ավարտված չլինելու դեպքում կարող է կիրառվել Պայմանագրի 2.1.3 կետի պահանջը:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ ստիպված է միակողմանի լուծել պայմանագիրը՝ համաձայն պայմանագրի 2.1.3 կետի և նախաձեռնել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 16-րդ և 17-րդ ենթակետերով և **«ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20»** ծածկագրով ընթացակարգի առաջին մասի 10-րդ բաժնով սահմանված գործառույթներ:

Հարգանքով՝

«ՀԱԷԿ» ՓԲԸ ԳՏՏ ԸՀ տնօրեն **Ս. Մաթևոսյան**

Կատարող
ԳԸԲ գլխ. մասնագետ՝
Ա. Ղազարյան
Հեռ. 010-20-04-91